

ԱՆՈՐՈՇ ՀՈԴԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հ. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լեզուներում բառիմաստի (առարկայի անվան) քերականական առկայացման կարեորագույն միջոցներ են հոդերը: Սրանց կիրառություններով է դերսկորվում այն կարգը, որը հայտնի է «որոշյալ և անորոշ առումներ» անունով, Հոդային այս կարգը, սակայն, հայերենում ունի ուրույն ենթակարգեր, որոնք մեր լեզվի ինքնատիպ զարգացման արդյունք են:

Թեև հոդային առումներում հիմնական հակադրվող ենթակարգերը որոշյալությունն ու անորոշությունն են, արտահայտության պլանում՝ որոշիչ և անորոշ հոդերը, սակայն հայերենում որոշյալությանը զուգահեռ անորոշ առմանը հակադրվում են նաև դիմորոշ, ցուցական, ստացական առումները ևս: Եվ իսկապես՝ անորոշ առումը որոշյալ, ցուցական, ստացական, դիմորոշ առումների բացառումն է¹:

Այնուամենայնիվ անորոշի քերականական իմաստը (նաև քերականական արտահայտությունը) միատարր չէ: Այս տեսանկյունից դիտելով՝ պետք է նշել, որ հոդերին վերաբերող լեզվաբանական գրականության մեջ դեռևս չկա այս հարցի համակողմանի ըմբռնում: Եվ քանի որ հայերենը հարուստ է հոդային իմաստավորումներով, ապա ավելի շատ հնարավորություններ կան անորոշի քերականական դրսևորումները բազմակողմանիորեն դիտարկելու համար:

Հոդային կարգ ունեցող այլ լեզուների քերականությունների մեջ ևս գործածական է «զրո վերջավորություն» կամ «զրո հոդ» անվանումը: Այս նշանակում է, «զրո հոդը» ճանաչվում է իբրև անորոշ առման քերականական արտահայտության միջոց: Պրոֆ. Գ. Զահուկյանը նկատում է, թե դա հակադրվում է բոլոր հոդերին որպես անառկայացականության (անորոշության) արտահայտիչ²:

Բայց այս չի նշանակում, թե հոդի բացակայությունն առհասարակ անորոշության դրսևորում է: Անհոգությունը կարող է քերականական-իմաստաբանական այլևայլ պայմանավորվածություն ունենալ: Օրինակ, բնությանը՝ ինքնին առկայացած բառիմաստը (հատուկ անուններ, բնության մեջ եղակի՝

¹ Երբ բառի արտահայտած առարկան չի առնվում (ընկալվում) խոսքային իրադրության կամ սիրտացիոն հատկանիշով, ապա այդպիսի դեպքերում ասում են՝ բառն անորոշ է: Եվ քանի որ լեզվի մեջ երկատրոհ հակադրություններով հակադրվող անդամներից մեկը կարող է լինել ցուցչավոր, իսկ մյուսը՝ առանց ցուցչի (եղակի—հոգնակի, սեռանիշ բայեր—լեզոք կամ անսեռ բայեր և այլն), ապա անորոշությունը, իբրև առկայացման բացակայություն, նույնպես ցուցչավոր չէ, ունի, այսպես կոչված, «զրո վերջավորություն»: Թեև, իհարկե, առկայացուցչի բացակայությունը ինքնին անորոշ առման ցուցչի արժեք է ստանում:

² Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 140:

միակի առարկաների անունները) կարող է բացառել հոգը, բայց այստեղ հողարկությունը անորոշ առման նշան չէ:

Լեզվաբանների մի մասը փորձում է անորոշ առումը բնութագրել ըստ էության որոշյալության հետ ունեցած հարաբերակցությունից դուրս, ոչ իբրև որոշյալ առման բացակայություն, բացառում: Նրանք առման իմաստը որոնում են բառիմաստի բնույթի մեջ, իբրև թե այն արտահայտում է ընդհանուր, վերացական և կամ ոչ իրական բառիմաստ³:

Իրականում անորոշ առումը բառիմաստի՝ որոշակի հայեցակետով շահակայացած լինելն է: Երբ, ասենք, աշակերտը նայում է գրատախտակին և ասում. «Գրատախտակին տառեր են դրված», ապա տառեր հասկացությունը (բառիմաստը) ո՛չ ընդհանուր է և ո՛չ էլ վերացական, այլ պարզապես չի վերցված իրադրական հարաբերակցությամբ՝ ո՛չ խոսողի, ո՛չ խոսակցի և ո՛չ էլ երրորդ մի անձնավորության կամ հայտնի ալլ որևէ առարկայի հետ: Ուրեմն՝ առարկան կարող է նույնիսկ գտնվել խոսողի զգայական ընկալումների ոլորտում, բայց նրա անունը մնա քերականորեն անորոշ, առանց հոգի:

Եթե նույնիսկ անորոշ առումով բառն ունի մի օժանդակ տարրը իբրև վերադիր, ապա, միևնույն է, առարկան նորից դուրս է մնում իրադրական (սիտուացիոն) հարաբերակցությունից: Սակայն այս դեպքում արդեն անորոշությունն ունի իմաստաբանական ուրույն երանգ:

Գնահատել անորոշ առման ենթակարգը, նշանակում է բնութագրել այն այս երկու դրսևորումներով. այսինքն սահմանումը պետք է հավասարապես վերաբերի և՛ զրո հոգով, և՛ մի անորոշով կառուցածներին:

Պրոֆ. Հ. Աճառյանը նշում է. երբ բառը ցույց է տալիս ամբողջ սեռի միջից վերցրած մի որոշ անհատ, ստանում է որոշիչ հոգ, իսկ երբ ամբողջ սեռի միջից առնվում է ըստ պատահման որևիցե մի անհատ, ապա բառը ստանում է անորոշ հոգ. «Անորոշ հոգ է գործածվում, երբ խոսողը կամենում է գոյականի ընդհանուր բովանդակությունը կոնկրետացնել այդ տեսակի առարկաներից մեկի, մասնակիի մեջ՝ առանց տարբերելու, որոշելու այդ մեկը նույն տեսակի մյուս առարկաներից»⁴. Ինչպես նկատելի է, անվանի հայագետի այս ուշագրավ դիտողությունները վերաբերում են մի անորոշով ձևերին:

Պրոֆ. Գ. Սևակը գրում է. «Անորոշ առումն այն է, երբ տվյալ բառը ցույց է տալիս տվյալ տեսակի առարկան, բայց առանց մասնավորապես նշելու նույն տեսակի այս կամ այն անհատ առարկան»⁵. Այստեղ արդեն բնութագրությունը լայն պլանով է վերցված:

Ըստ պրոֆ. Գ. Զահուկյանի՝ մի հոգը ուժեղացնում է անորոշությունը. «Անորոշ առումը, — գրում է նա, — հակադրվում է որոշյալ առմանը զրո ձևավությամբ, բայց անորոշությունը կարող է ուժեղացնել մի բառով, որ ձևականորեն տարբերվելով մեկ թվականից՝ փաստորեն ստացել է անորոշ հոգի արժեք»⁶:

³ Տե՛ս նաև Հ. Զ. Պետրոսյան, Գոյականի առումները հայերենում, Երևան, 1960, էջ 25—26:

⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3. Երևան, 1957, էջ 934, 979:

⁵ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 274:

⁶ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 187:

կան լեզվաբաններ, որոնք գտնում են, թե որոշիչ հոդը առանձնացնում է տվյալ իրադրության մեջ միակ հնարավորը, իսկ անորոշ հոդը՝ բազմաթիվ հնարավորներից մեկը»⁷:

Պրոֆ. է. Աղայանն ընդգծում է. «Անորոշի համար որպես ցուցիչ գործածվում է սովորաբար մի-ն որպես անորոշ հոդ, որը սակայն կարող է չլինել կամ փոխարինվել զանազան անորոշ դերանուններով (ինչ-որ, որևէ, ինչ-ինչ և այլն)» անորոշի համար ուրեմն, իբրև բացարձակ ձև պետք է դիտել ոչ թե այդ բառերը, այլ պարզապես որոշիչ հոդի բացակայությունը, կամ այլ կերպ՝ զրո հոգը»⁸:

Նշված բնութագրությունները տարբեր տեսանկյուններից (կառուցվածքային, իմաստաբանական) այս կամ այն չափով բացահայտում են անորոշ առման քերականական էությունը: Մեր կարծիքով՝ այս առման ամբողջական գնահատումը պետք է կատարել հաշվի առնելով հետևյալը. ելնելով մի հոդով անորոշ առման և առանց դրան դրսևորվող ձևերի քերականական մերձավոր, բայց ուրույն իմաստավորումներից, կարելի է այս առումը ներկայացնել երկու ենթատեսակներով՝ ընդհանուր անորոշ առում և մասնավոր անորոշ առում: Առաջինը զրո հոդով ձևերի համար, երկրորդը՝ մի հոդով ձևերի համար: Սա ոչ միայն կառուցվածքային տարբերություն է, այլև՝ իմաստաբանական: Երկուսն ընդհանուր են նրանով, որ հավասարապես բացառում են որոշյալությունը (որոշյալ, ստացական, ցուցական, դիմորոշ առումները), տարբեր են նրանով, որ մի հոդը բացառելով հանդերձ որոշյալությունը՝ բառիմաստը նաև մասնավորում, առանձնացնում է ուրույն հատկանիշով, այսինքն՝ առանձնացնում է միասեռ առարկաներից մեկը՝ մթագնած միակիության (քանակային) հատկանիշով:

Բայց չէ՞ որ որոշիչ հոդն էլ ունի մասնավորման-առանձնացման դեր: Տարբերությունը այստեղ առանձնացման հատկանիշի բնույթի մեջ է: Որոշիչ հոդը կարող է հանդես գալ իբրև ինքնին՝ բնությամբ առկայացած բառիմաստի ցուցիչ, ինչպես այդ տեսնում ենք արդի հայերենի հատուկ անունների հոդառության մեջ, կարող է (և սա նրա էությունից բխող կիրառություն է) լինել նաև իրադրությամբ առկայացած բառիմաստի ցուցիչ: Մինչդեռ անորոշ հոդը չառկայացած բառիմաստը մթագնած միակիության (քանակային) հատկանիշով մասնավորելու ցուցիչ է:

Այդ դեպքում մի հոդով անորոշը ինչ-որ չափով պետք է շփման կետեր ունենա որոշյալ հոդի կիրառության հետ: Այդպիսի առնչակցություններ իսկապես կան: Հենց դրանով պետք է բացատրել այն երևույթը, երբ խոսքի մեջ կ'մի-ն, կ' որոշիչ հոդը կարող են հանդես գալ միևնույն միջավայրում (շրջապատում), մինչդեռ ընդհանուր անորոշ (զրո հոդով) բառաձևը կարող է բացառվել այդ միջավայրից: Եվ որպեսզի զրո հոդով բառաձևը հանդես գա այդպիսի միջավայրում, սովորաբար նա ստանում է արտասանական լրացուցիչ երանգ (հատկանիշ), ունենում է արտասանական ուժգնացում (բառական շեշտի խստացում): Հմմտ. «Ուսուցիչս (դ, ք) լավ տրամադրության մեջ է»: «Մի ուսուցիչ լավ տրամադրության մեջ է»: «Ուսուցիչ լավ տրամադրության մեջ է»:

⁷ Թ. Կումանյան, *Артикли в современном армянском языке*, Ереван, 1961, стр. 100.

⁸ Է. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, 1967, էջ 163:

Վերջին նախադասությունը այդ շարահարաբայությամբ հնարավոր չէ, այն պետք է արասանական-կառուցվածքային որոշ փոփոխության ենթարկվի. «Ուսուցի՛չ է լավ տրամադրության մեջ»: Բայց այսպես էլ նկատելիորեն արհեստական է: Իհարկե, կան շատ դեպքեր, երբ արտասանական-կառուցվածքային փոփոխությունը լիովին հնարավոր է դարձնում նրա կիրառությունը. հմտ. «Երեխա(դ, ե) դրել է աղատ շարադրություն»: «Մի երեխա դրել է աղատ շարադրություն»: «Երեխա՛ է դրել ազատ շարադրություն»:

Թեև որոշիչ հոգը ծագումնաբանորեն սերում է դերանունից և իր բնական էվոլյուցիայով հեռանում է նրանից, ապա սա ինքնին նշանակում է, թե դրանով իսկ հոգի մեջ մեռնում է դերանվանականը: Անորոշ հոգը՝ մի-ն սերում է թվականից, պատմականորեն հեռանում է նրանից և քանակային արժեքի մթագնումով՝ մի-ի մեջ մեռնում է թվականը, հառնում դերանվանականը: Բայց դա չի հանգեցնում դերանվանականի հաստատմանը: Ունե, ինչ, իմե դերանունները, չնայած մի հոգի հետ ունեցած իմաստային-կիրառական աղերսին, այնուամենայնիվ, մնում են ինքնուրույն բառեր, մինչդեռ մի-ն բնութագրվում է միայն քերականական պլանով:

Կարևոր հարց է այն, թե ինչպես են հակադրություններ կազմում մի կողմից՝ որոշյալ առումը, մյուս կողմից՝ ընդհանուր անորոշ ու մասնակի անորոշ առումները: Հայերենում որոշյալությամբ առկայացման արժեք ունեն նաև ստացական, դիմորոշ, ցուցական առումները: Երբ ասում ենք՝ որոշյալ-անորոշ հակադրություն, բնականաբար որոշյալի եզրում դնում ենք նաև այդ իմաստավորումները. հակադրության մյուս եզրում անորոշ առումն է իր երկու ենթատեսակներով:

Իմաստաբանական ու կառուցվածքային հանգամանքներով պայմանավորված՝ այս հակադրություններն ունեն դրսևորման առանձին սահմանափակումներ: Այսպես՝ կարելի է ասել՝ «Հայրս ոտանավոր է գրում»: «Հայրը ոտանավոր է գրում»: Բայց չենք կարող ասել՝ «Հայր ոտանավոր է գրում»: Մինչդեռ աշակերտ բառիմաստը հիմնականում հանդուրժում է այդ հակադրությունները. «Աշակերտս(դ, ք) ոտանավոր է գրում»: «Մի աշակերտ ոտանավոր է գրում»: «Աշակե՛րտ է ոտանավոր գրում»: Վերջին դեպքում արտահայտությունը ենթարկվում է կառուցվածքային մասնակի փոփոխության:

Առկայացումը ենթադրում է խոսքային ոլորտ ներքաշված առարկաների որոշակի հարաբերակցություն. անառկայացումը այդ հարաբերակցության բացակայությունն է: Այդ պատճառով ճիշտ չի լինի արտահայտության պլանում ուղղակի հակադրություններ որոնելը. չէ՞ որ խոսքային միջավայրը երկու առումների համար տարբեր պետք է լինի: Ահա թե ինչու ստորոգյալը և առկայացած ենթական ժամանակակից գրական հայերենում ունեն սովորական շարահարաբայուն, մինչդեռ անորոշ ենթական ստորոգյալի հետ դիրքային փոփոխությամբ է հանդես գալիս (հմտ. «Ջուրը գալիս է». բայց՝ «Ջուր է գալիս»): Սա առհասարակ վերաբերում է բայական ստորոգյալի հետ կապ ունեցող առարկայի անվանը:

Ժամանակակից գրական հայերենում ս, դ հոգերով առումները տարածվում են հոլովական հարացույցի բոլոր անդամների վրա, մինչդեռ որոշյալ առումը՝ ուղղական, տրական, հայցական բառաձևերի վրա: Մի հոգով անորոշ առումը տարածվում է եզակի հարացույցի բոլոր անդամների վրա, որոշ-

լալ առումը՝ միայն վերը նշված հոլովածների վրա, բայց և՛ եզակիում, և՛ հոգնակիում:

Բացի այդ՝ առկայացումը կարող է խոսքային միջավայրում հարաբերակցվել մասնավոր անորոշի հետ, իսկ ընդհանուր անորոշի հետ՝ ոչ: Օրինակ՝ «Երբ պայծառ օրըդ տխուր կըմթնի (ՎՏ, ԵԺ, հ. I, էջ 42)»⁹. այստեղ ս. դ, և(ը), մի հոգեբը գործածելի են օր բառի հետ, իսկ զրո հոգը՝ ոչ: Կամ՝ «Երեկսն յոանջալից էր»¹⁰. այստեղ էլ բոլոր հոգերը հնարավոր են, զրոն՝ ոչ:

Երբ ասում ենք՝ «Երկրաշարժն այնքան ուժեղ էր, որ ասունը փլվեց» և «Երկրաշարժն այնքան ուժեղ էր, որ ասուն փլվեց», ապա սա էլ հակադրության ուժեղ դիրք է: Անորոշ ենթական այստեղ արտասանական կողմով առանձնացված է:

Շիրվանզադեի մոտ հանդիպում ենք այսպիսի օրինակի. «Տան ընդարձակ բակում խռնվել էր խեղճերի ահագին բազմություն» (Շիր., ԵԺ, հ. III, էջ 30): Այստեղ ենթական հնարավոր է նաև որոշյալ առումով. «Տան ընդարձակ բակում խռնվել էր խեղճերի ահագին բազմությունը». առկա է ընդհանուր անորոշի և որոշյալի ուղղակի հակադրություն: Սակայն արդի գրական հայերենի համար ընդհանուր անորոշ ենթական, ինչպես նշեցինք, ստորոգյալի հետ կապված գոյականն առհասարակ, բայի նկատմամբ ունի նախադաս դիրք. այսինքն տվյալ դեպքում՝ «Տան ընդարձակ բակում խեղճերի ահագին բազմություն էր խռնվել»:

Վերը շարադրածից դժվար չէ հետևեցնել, որ ընդհանուր անորոշ և մասնավոր անորոշ առումներն էլ արտահայտության պլանում կարող են չունենալ նույն խոսքային միջավայրը¹⁰: Թեկուզ այն հանգամանքը, որ մի-ն հանդիպում է այն բառերի հետ, որոնք ունեն թվարկվող (հոգնակի կազմող) բառի-մաստ և եզակի այն բառերի հետ, որոնք ընդհանուր-տեսականային նշանակություն մթ չեն գործածված, ինքնին դրա ապացույցն է:

Այս հանգամանքը միաժամանակ ցույց է տալիս, որ ձևաբանական մակարդակը հաճախ չէ հոգային առումների հակադրությունները բացահայտելու համար:

Հին գրական հայերենում ևս անորոշ առումը քերականորեն արտահայտվում էր մի օժանդակ բառով ու զրո հոգով: Սակայն որոշյալ ու անորոշ բառածների հակադրությունը այլևայլ դրսևորումներ ունեւ: Նախ մի-ն իբրև թվական և մի-ն իբրև օժանդակ. բառ զանազանվում էին հիմնականում իմաստով. երկու նշանակություններով էլ նա համաձայնում էր գոյականի հետ, սովորաբար ետադաս շարադասություն մթ, հոգի ֆունկցիայով այն անշեշտ վերջահար տարր էր: Այս բառը իբրև գոյականի վերադիր հանդիպում էր եզակի հարացույցի բոլոր անդամների հետ. հոգնակիի հետ գործածական չէր:

⁹ Հոլովածում օգտագործված համառոտագրությունները. ՎՏ, ԵԺ—Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1960: Շիր., ԵԺ—Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. III, Երևան, 1959: ԱԱ, ՀԵ—Ա. Արփիարյան, Հնարի երկեր, Երևան, 1951: ԳԱ, ՄՁԱ—Գ. Սևան, Միծեռնակները ցածն անցան, Երևան, 1964: ՏԿ, ՎԱ—Տ. Կամսարական, Վարժապետին աղբիկը, Երևան, 1956: ԳԶ, ԵԺ—Գ. Զոհրապ, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962:

¹⁰ Բերենք մի բնորոշ օրինակ ես. «Գնանք անտառի խորքը. այնտեղ կհանգստանանք:—Իսկ գալլ չի՞ լինի»: Գալլ անորոշը այստեղ մի հոգը բացառում է:

Ինքնին առկայացած հասկացությունների անունները բնականաբար մի հոգ ստանալ չեն կարող: Որոշյալ-անորոշ քերականական հակադրությունը սրանց վրա ըստ էության չի տարածվում: Սակայն երբեմն մի տարրը տեսնում ենք նաև, այսպես կոչված, որոշյալ հայցականում, երբ նրա որոշյալության ցուցիչը միայն զ նախդիրն է, օրինակ՝ զայր մի: Թեև այս ձևերը դասական գրաբարի համար այնքան էլ բնորոշ չեն, բայց ուշգրաբարյան տեքստերում նկատելի են, մասամբ և միջին հայերեն որոշ տեքստերում: Այս երևույթը կարելի է բացատրել նրանով, որ ա) զ-ն իբրև որոշյալության ցուցիչ արդեն թուլանում էր, բ) զ-ն կրկնաբեռ էր. նրա մեջ երկար ժամանակ պահպանվեց հոլովատարբերիչ նշանակությունը, գ) մի-ն դեռևս լրիվ չէր ձևավորվել իբրև անորոշի ցուցիչ, ավելի ճիշտ՝ այն մեծ մասամբ թվականական կիրառություն ուներ:

Ետգրաբարյան հայերենում աստիճանաբար մի-ի մեջ հաստատվում է հոդային ֆունկցիան, թեև մինչև այսօր էլ այն ունի թվականական կիրառություն: Մի-ն կորցրեց գոյականի հետ ունեցած հոլովական համաձայնության հատկությունը, հայերենի որոշ վիճակներում ֆունկցիավորեց որպես վերջահար, որոշ վիճակներում՝ իբրև նախահար անշեշտ տարր:

Սի բառը հոդային ֆունկցիայով տարածված կիրառություն ունի հայերենի բարբառներում: Սա նույն տեսքով քիչ է հանդիպում. մեծ մասամբ ներկայանում է հնչյունական տարաճումներով, իբրև մի (Արարատյան, Լոռու, Մալաթիայի բարբառներում), որոշ բարբառներում՝ մի, մին (Ն.-Ջուղայի, Հադրութի, Շամախու, Կոզնի), մի քանիսում՝ մին (Մեղրու, Արեշ-Հավարիքի, Կաթավաբերդի, Կարճևանի, Ղարաբաղի), Մարաղայի, Ուրմիայի, Թբիլիսիի բարբառներում՝ մէ, Կարնո, Վանի, Սասունի, Շատախի բարբառներում՝ ըմ(մ), Համշենի, Առտիալի, Սվեդիայի, Զեյթունի, Մարաշի, Կեսարիայի, Հաճընի, Պոլսի բարբառներում՝ մը(մ) կամ մըն, Ադուլիսում՝ մույն: Որոշ բարբառներում հիմքի հնչյունաբանական հատկություններով պայմանավորված՝ առկա են տարբերակներ. օրինակ. Մարաշի բարբառում՝ մը||մի||մու||մի:

Անորոշ հոգը բարբառների մի խմբում նախահար անշեշտ տարր է, գործածվում է հոդառու բառից անջատ, ինչպես, օրինակ, Ղարաբաղի, Արարատյան, Հադրութի, Կարճևանի, Թբիլիսիի, Ուրմիայի, Արեշ-Հավարիքի, Լոռու, Մեղրու, Ադուլիսի, Նոր Ջուղայի բարբառներում, մյուս մասի մեջ վերջահար անշեշտ տարր է և հնչյունական-արտասանական հանգամանքներով պայմանավորված՝ կարող է գործածվել հոդառու բառից անջատ կամ միասին (Վանի, Շատախի, Կարնո, Հաճընի, Առտիալի, Կեսարիայի, Սասունի, Մարաշի, Զեյթունի, Սվեդիայի, Համշենի, Մալաթիայի, Պոլսի բարբառներում և խոսվածքներում):

Անորոշ հոգը էական զարգացման է հասել արևմտահայ գրական լեզվում: Մի կողմ թողնելով զրո հոգը, կանգ առնենք մը (մըն) անորոշի մի քանի կիրառությունների վրա: Այս հոգը ներկայանում է մը և մըն տարբերակներով. մըն տարբերակը հանդիպում է հիմնականում էական բայից ու ալ շաղկապից առաջ ընկած դիրքում. երկու տարբերակներն էլ հոդառու բառի նկատմամբ վերջահար անշեշտ տարրեր են. օրինակ՝ «Կնոջ մը սրտին մեջ միշտ մեծ տեղ մը կը գրավե» (ԱԱ, ԸԵ, էջ 25). «Առավոտ մըն էր» (ԳՍ, ԾՅԱ, էջ 254): Մը (մըն) հոգը զուգորդելի է եզակի հոլովական հարացույցի բոլոր անդամների հետ:

Հողը կարող է անցնել նաև գոյականի վերադրին: Այսպես՝ հողը հարում է վերադրին, երբ միասեռ առարկաների խումբը վերադրի միջոցով պետք է առնվի անորոշ քանակային սահմանափակումով. օրինակ՝ «շատ մը օգուտներ», «շատ մը մարդիկ», «կարգ մը կիներ», «տասնյակ մը շենքեր» և այլն: Եղանակավորող նշանակությամբ այն հանդես է գալիս մակբայա-պարագայական ֆունկցիա ունեցող անդամի հետ. «Ձեմ գիտեր լավ մը», «Կամաց մը փսփսաց», «Շատ մը խնդացին»:

Քանի որ մը անորոշով բառիմաստն առանձնանում, մասնավորվում է մթազնած քանակային հատկանիշով, և քանի որ այդ քանակային հատկանիշը ունի եզակիության (մեկի) գաղափար, ապա բնական է, որ այն հոգնակի բառաձևի հետ չի կարող գործածվել: Սակայն արևմտահայ որոշ բարբառներում և գրական արևմտահայերենում մասնակի գործածությունների հանդիպում ենք: Ինչո՞ւ վ բացատրել այդ:

Մը անորոշ հողը իր իմաստաբանությամբ և կիրառություններով ամենից ավելի մոտ է կանգնած անորոշ դերանուններին: Նույնիսկ որոշ քերականներ մը (մի) հողը անորոշ դերանվան տեղ են ընդունում: Երբ ասում ենք՝ «Բաներ մը ըսեր ես», ապա հասկացվում է՝ «Ինչ-որ բաներ ես ասել»:

«Կրնայի քիչ թե շատ բաներ մը գրել» (ԳՍ, ԾՅԱ, էջ 168). այստեղ հողը միայն դիրքով է հարում բաներ հոգնակիին. նա քերականորեն հարում է գոյականի վերադրին («շատ մը բաներ»): Եթե ընդունենք, նույնիսկ, որ մը-ն բաներ գոյականին է հարում, ապա, միևնույն է, այն բուն անորոշ առման համար չէ, կունենա ինչ-որ, որոշ դերանունների իմաստը: Այս հանգամանքը և մասնավորապես անորոշ դերանունների հետ մը-ի զուգորդումները թույլ են տալիս ասելու, որ անորոշ հողի մեջ առկա է նաև ազդու արժեք:

Արևմտահայերենի մը հողը կիրառական լայն ոլորտ ունի. կարելի է ասել ավելին, քան, օրինակ, արևելահայերենի, գերմաներենի, անգլերենի, ֆրանսերենի անորոշ հողը: Այնպես որ մը-ն ազատ գործածություն ունի նաև նյութային, վերացական, առհասարակ շփվարկվող շատ առարկաների անունների հետ: Համեմատաբար ծավալուն է նրա գործածությունը նույնիսկ ոչ-գոյական բառերի հետ, երբ նա հատկապես եղանակավորող (ու ազդու) իմաստ է դրսևորում:

Այս տեսանկյունից դիտելով նկատում ենք, որ արևմտահայերենի անորոշ հողը էական ընդհանրություններ ունենալով արևելահայերենի համապատասխան հողի հետ՝ ունի նաև ինքնուրույն և ինքնատիպ շատ կիրառություններ: Ուշադրություն ենք հրավիրում հետևյալ կիրառությունների վրա. «Բայց նորեն կարդացեք, պե՛յ, սխալ մը չըլլար» (ՏԿ, ՎԱ, էջ 198), «Կամաց մը շնորհակալություն կը հայտներ» (ԳԶ, ԵԺ, հ. I, էջ 191), «Իր աջ թաթիկովը ուժով մը կը սեղմեր դեռ» (նույն տեղում, էջ 292), «Մնաց բավական մը լուռ» (ԳՍ, ԾՅԱ, 35), «Շատ տարտամ կեցված մը կուգար մտքին առջև» (նույն տեղում) և այլն:

Կան մի շարք դեպքեր, երբ արևմտահայերենը դնում է անորոշ հող, մինչդեռ արևելահայ գրական լեզուն բացառում է այն: Նման դեպքերում արևելահայերենն ունի անհոգություն (զրո հող) կամ գործածում է որևէ անորոշ դերանուն, և կամ կառուցվածքային այլ փոփոխություններ են տեղի ունենում՝ այսպես՝

արևմտաճայերեն

բաներ մը ընել
շատ մը բաներ ընել
ուժով մը կը սեղմեր
զատվիլ մը առանց կովի
մեկնելը վայելել մըն է,
այնքան ուշադիր մը
շատ մը խնդացին
շուտ մը կը կապվեր
այնպես մը որ
կամաց մը փսփսաց
տասնյակ մը շենքեր
ծուխի մը հոտը

արևելաճայերեն

բաներ անել
շատ բաներ անել
ուժով սեղմում էր
զատվել առանց կովի
մեկնելը վայելել է,
այնքան ուշադիր
շատ խնդացին
շուտ կապվում էր
այնպես որ
կամաց փսփսաց
տասնյակ շենքեր
ծխի հոտը

Մը հոգի ֆունկցիոնալ ժանրաբեռնությունը մի-ի հանդեպ երևում է թե-կուզ գործածության հաճախականությունից, Օրինակ. «Անիվները իրենց շըր-ջանին մեջ, տեղ մը հասնելուն, միշտ վարանումի պես բան մը ունեին նոր շրջան մը սկսելի առաջ. ասով մասնավոր եղանակ մը կը ձևանար» (ԳՁ, ԾԺ, հ. I, էջ 87): Արևելահայերենում մի-ն չունի, կամ գրեթե չունի, այսպիսի կու-տակում:

Այնուամենայնիվ չի կարելի ասել, թե եղանակավորսան-ազդու նշա-նակությամբ արևելահայերենի մի-ն չունի շփման կետեր արևմտահայերենի մը-ի հետ. այսպես՝ «Այվ մը դիտել||մի լավ դիտել», «Քանի մը եզներ||մի քանի եղներ»: Արևմտահայը կարող է ասել. «Անձրև մը կու գար», բայց արե-վելահայը չի կարող ասել. «Մի անձրև էր գալիս»: Մինչդեռ մի անձրև զուգոր-դումը հնարավոր է այլ իմաստավորմամբ, երբ անհրաժեշտ է ընդգծել (ոճա-արտահայտչական միտում) անձրևի սաստկությունը. «Մի անձրև՝ էր գալիս»:

Արևելյան դրական հայերենում ևս անորոշ առումը դրսևորվում է մի օ-ժանդակ բառով և զոր հոդով: Մի-ն հոդառու բառի նկատմամբ նախահար անշեշտ տարր է: Եթե հոդառուն ունի վերադիր (որոշիչ), ապա հոդը սովորա-բար նախորդում է դրան. «Մի փոքրիկ թռչուն», «Մի երրորդ անձնավորու-թյուն»: Սակայն մի-ի դիրքը այսպիսի կապակցություններում ըստ էության նկատելիորեն ազատ է, և այն կարող է հանդիպել իբրև գոյականին անմի-ջականորեն նախահարող տարր. «կարմիր մի վարդ», «փոքրիկ մի թռչուն», «ծանր մի հարված» և այլն:

Ժամանակակից արևելահայ գրական լեզվում մի բառը գործածվում է նաև մեկ թվականի նշանակությամբ, թեև զնալով նրա այսպիսի կիրառու-թյունների ոլորտը աստիճանաբար նեղանում է: Իր հերթին մեկ թվականի հոդավոր ձևը՝ մեկը այժմ գործածվում է և՛ փոխանուն թվականի, և՛ անորոշ դերանվան նշանակություններով:

Մի բառը գործածական է եզակի հոլովական հարացույցի բոլոր անդամ-ների (հոլովաձևերի) հետ. առհասարակ հոգնակի բառաձևերի հետ կիրառու-թյուն չունի: Այն չի գործածվում նաև անհոգնականների հետ, իսկ եթե վեր-ջինները իմաստային անցումով ձևեր են բերում թվարկվողականության զա-ղափար, ապա գործածությունը հանդուրժելի է դառնում: Հնարավոր չէ ասել՝ «Մի ջուր տուր», բայց՝ «Մի քիչ ջուր տուր», «Մի կաթիլ ջուր տուր»:

Ինչպես նկատելի է, որոշակի կիրառություններում մի-ն կարող է հարել ոչ թե գոյականին, այլ նրա վերագրին: Այս դեպքում նա եղանակավորող-աղ-դու նշանակություն ունի. այսպես՝ մի որոշ, մի այլ, մի ամբողջ, մի ողջ, մի ուրիշ, մի քանի, մի ինչ-որ, մի որևէ, մի այնպիսի, մի տեսակ, մի երկու, մի երեք և այլն:

Որ որոշակի զուգորդումներում մի-ն հարում է ավելի որոշիչ վերագրին, քան գոյականին, երևում է նաև հետևյալից: Առանձին դեպքերում մի հոգի հեռացումը նկատելիորեն փոխում է նախադասության ոճա-արտահայտչական գունավորումը: Եթե ասում ենք՝ «Պարգևատրվածները մի յոթ հոգի կլինեն», ապա ակնհայտորեն երևում է, որ մի-ն կապակցական հարաբերության մեջ է յոթ-ի հետ, նրա ներկայությունը տվյալ երանգավորման համար անհրաժեշտ է:

Առհասարակ մի-ի եղանակավորիչ ֆունկցիան հստակ նկատվում է բա-յական ձևերի հետ ունեցած նրա զործածություններում. օրինակ՝ «Մի երգողն էլ լինի», «Մի ուտողն էլ լինի», «Մի գնա տես՝ ինչ եղավ»:

Նշված դեպքերով, անկասկած, չեն սահմանափակվում մի անորոշ հոգի իմաստային-ֆունկցիոնալ կիրառությունները:

НЕОПРЕДЕЛЕННЫЙ АРТИКЛЬ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Г. З. ПЕТРОСЯН

Резюме

Артикли являются средствами грамматических значений (в основном, определенности и неопределенности). В армянском языке значение неопределенности противопоставляется определенности в широком смысле. Последняя выступает здесь как совокупность смежных грамматических значений (определенность в узком смысле, указательность, посесивность, персонность).

Неопределенность выступает в двух планах: как общая — с нулевым артиклем и частичная — со служебным словом մի (mi). Разница этих двух видов неопределенности заключается в том, что безартикльная форма слова (слово с нулевым артиклем) исключает всякую соотнесенность (определенность) предмета, но та же форма с артиклем մի (mi) делает возможным выделение предмета с затемненным признаком количества (признаком единичности).